

¼ ¶ àòÊ² ò¼ø àÔæ
Û² Ð² î² Ì Ü° ð¼Û

Համայն հայրերը կը նախապատրաստուի ոգեկոչելու Մեծ Եղեռնի 93-ամեակը: Բնակամբար, այս օրերուն իրաքանչիւր հայ մտովի գրոյց մը պիտի ունենայ ցեղասպանութեան զոհ նահատակներուն հետ: Կարելի չէ մեր երակներուն մէջ ունենայ հայու արիւն եւ ակնածանք չունենայ նահատակներուն հանդէպ: Ապրիլ 24-ը, երէկ, ֆիզիքապէս մեզմէ բաժնուած նահատակներու յիշատակի օրն էր, այսօր, ֆիզիքական նահատակութեան գուգահեռ ան նաեւ կը խորհրդանշէ կենդանի նահատակութենէն սթափելու օրը:

Վերջիջելով նահատակները, մտաբերելով այն կորուստները, որոնք պատահեցան 1894-էն 1920 թուականներուն եւ պատկերելով այն տարաբախտ սերունդներուն շարձարանները, մեր ենթագիտակցութեան մէջ ինքնաբերաբար կը ծագի վրիժապանութեան ու զայն կողմէն, անմահութեան հրահանգը, ազգային ինքնութեան եւ պատկանելիութեան հաստատարի մնալու նուիրական կտակը: Մենք իրաւունք չունինք մոռացութեան տալու արհաւիրքներու շարանները, լքելու մեր դատը, բարձիթող ընելու մեր ազգային արժանապատուութիւնը եւ սակարկութեան նստելու մեր հողային պահանջներուն շուրջ:

Այո, մօտ օրէն պիտի ոգեկոչենք ֆիզիքապէս նահատակուած մեր նախնիները: Անոնց անթաղ մարմիններուն, անձիքիմ ուկորներուն, հողի ու արագի հետ շարախուած աճիւններուն տխուր յիշատակները մեզ պիտի ցնցեն ազգովին, պիտի խոնարհինք բոլորս, ամէնօրեք՝ ուր որ կը շնչէ հայը, աշխարհի որ անկեան մէջ ալ գտնուի ան: Պիտի խոնարհինք ազգովին, մեր նահատակներուն անմահ յիշատակին, միաժամանակ պիտի հաստատենք, որ բիրտար նահատակներ ունենալով հանդերձ կը մերժենք նահատակութիւնն ու անճանաչութիւնը, որովհետեւ մեր ժողովուրդը կ'ուսման է սպորի:

Բայց զգոյ՛ջ: Նահատակներու յիշատակը ոգեկոչելու կողքին ունինք այլ պարտականութիւն մը եւ: Այս մէկը կը վերաբերի նոր նահատակութիւններու կանխումբին. խօսքը կը վերաբերի նահատակութեան նոր եղանակին՝ սպիտակ նահատակութեան, որ տեղի կ'ունենայ աշխարհի բոլոր անկիւններուն մէջ, գրեթէ իրաքանչիւր օճակի մէջ, ամէն ընտանիքի մէջ, յամրաքայլ եւ սիգանէ կերպարանքով: Մեր շուրջը այսօր ունինք ապրող ու շնչող նահատակներ ու այդ նոր նահատակութիւնը անկի սարսափելի է, որովհետեւ ան չունի սահման ու ամօթ: Նոր նահատակութիւնը ազգին ձուլումն ու համազգային պայտարումն է: Նոր նահատակները ոչ թէ գաղափարի ու ազգային գերագոյն նպատակի գոհեր են, այլ՝ ուժանալու, անհետանալու...: Օրինակ մը պարզապէս. 1915-ին, անապատի առագծերուն վրայ նահատակ սերունդի վերաբարող որբերը Ա. Բ. Գ. սորվեցան, իսկ ներկայիս օտար եւ հայկական կարգ մը վարժարաններու մէջ ազգութենէ որբացածներ Ա. Բ. Գ. կը ծաղրեն...:

Հետեւաբար, երբ պիտի ոգեկոչենք նահատակները զգուշանաք մեր շուրջը վստահող կենդանի ու կամուր նահատակներէն ու կանխենք նոր նահատակութիւնը, կամուր ձուլումը:

ԱՀԱՐՈՆ ՇԵՐՏԸՄԵԱՆ

Հայրենական Զրոյցիկ

«ՄԵԿԸ ԶԿԼԼԱԾ, ՄԻՒՍԸ ԿԱՐԵԼԻ՞ Է ԿԼԼԵԼ»

Հայաստանի ներքաղաքական իրավիճակը տակաւ կը մնայ անկայուն, ի հեճուկս իշխանութեանց հաւաստիքներուն, թէ անկարգապահներն ու հրահրդիչներն են, որոնք հետաքննութեան կ'ենթարկուին կամ պատիժի կ'արժանանան:

Պատասխանատուութեան իրավիճակը կամ կանչելու հասկացողութիւնները, որոնք «հայած իւր»-ի նման կը լսուին իշխանութիւններու կողմէ, պարզապէս խժալուր յանկերգներ են, որովհետեւ ցարդ ժողովուրդը չհասկցաւ թէ ինչո՞ւ մարդիկ կ'ենթարկուին քաղաքական հաշուեյարդարներու:

Ի դէպ, այս պատասխանատուութեանց հարցը, եթէ իրօք անհրաժեշտութիւն մըն է, առաջին հերթին պէտք է պատասխանատուութեան կանչուելին այն բոլոր պատասխանատուները, որոնք պատասխանատու են 27 Հոկտեմբեր 1999-ի նախճիրին, երբ Ազգային ժողովի շէնքին մէջ պետական աւագանին անհրոտեցան:

Խօսքը չի վերաբերի «գործիք» Նախիի Յունաստանի եւ ընկերներուն, այլ այն հեղինակներուն, որոնք ծրագրեցին ու կազմակերպեցին հաւաքական այդ սպանող, իսկ անոնք ուրիշ տեղ չեն գտնուիր բացի Հայաստանէն:

Ամէն տարի ծաղկեպսակ գետեղելով նահատակներու շիրիմի, այդ իշխանութիւնները գոհունակութիւնը կ'ապրին «բան մը» ըրած ըլլալուն, երբ բուն ռճարգործները չեն բացայայտուած, ընդհակառակը՝ յատուկ ճիգ մը կայ այդ բոլորը շրջանցելու:

Այսօրուան պատասխանատուները (իբր թէ) կը տաճակային, յաշտ արտաքին աշխարհի առջեւ Հայաստանի վարկի անկումէն, բայց ինչո՞ւ կը մոռնան կամ կը ձեռնարկեն, թէ այդ վարկը ուժգնապէս ու հիմնապէս արդէն ցնցուած էր տակաւին հոկտեմբերեան դաւադրութենէն տեք, քան ի որ հանրապետութեան խորհրդարանը Նշաւակ կը դառնար աւագակային Ներխուժումի եւ անողորմաբար կը սպաննուէին բարձրաստիճան պետական ղեկները, անշուշտ, մեղսակցութեամբ այն բոլոր դաւադիրներուն, որոնք ռճարգործի դուրսէն կը հովանաւորէին ու կը հետեւէին տխրահռչակ զինեակներու վայրենաբարող գործողութիւններուն:

Քննարեանին մեկնումը եւ Սարգսեանի գալուստը բան մը պիտի փոխէ՞ քաղաքական ու ֆիզիքական ահաբեկչութեան մէջ, երբ Նոյն սարդիչ ոճն ու բըռնազբօսիկ դրուփիւնը կ'իշխէ երկրին մէջ, շարունակուող վերիվայրումներով:

Մարդիկ որոնք սահմանադրութեան անունով կը խօսին, գայն պաշտպանելու եւ յարգելու մտօք, արդեօք պահ մը կը մտածեն, թէ իրենք կը խոցեն գայն, Նոյնիսկ կը վիժեցնեն, ամէն անգամ որ անձնակերպի վարքագիծով կը գործեն:

Նախագահական Երդույնը, այն ալ սրբացած աւետարանի մը վրայ, եթէ պիտի մնայ միայն շրթամարգանքային, ապա, վա՛յր եկեր է անոր, մանաւանդ երբ կը տեսնենք թէ անցող տարը տարիներուն ուր հասաւ ժողովուրդին ապրուստային-տնտեսական կենսամակարդակը:

Թեղեւ տիրող քառսին մէջ ամէնէն ահաւորը այն է, որ բացի քաղաքական գործիչներէն, ստորնացուցիչ թիրախի արժանացան նաեւ նորօրեայ դիւանագիտական մարզի կարկանդակ ղեկներէն ոմանք, սոր արտա մը որոշմեղով Հայաստանի վարկին վրայ:

Ի՞նչ էր այս գործիչներուն մեղքը. անհնազանդութիւն՝ ո՞չ, անօրինակաւորութիւն՝ ո՞չ, դաւադրութիւն՝ ո՞չ, յեղափոխութիւն՝ ո՞չ, բայց վստահաբար դժգոհութիւն տիրող վարչակազմէն եւ նաեւ բռնութիւններէն:

Իսկ այս բոլորը ոչ միայն անհանդուրժելի էր Քննարեանին եւ անոր շըրջապատին, այլեւ ամբողջովին մերժելի, որուն համար պիտէ մտրակները ճօճեցին ու գրիչի մը հարուածով պաշտօնակն ըրին գանձը:

Այս վարչակարգին համար, այն ինչ որ «մէրուք»-ակնա չէ, պէտք է զգեստել, ո՞վ որ ալ ըլլայ ան եւ ի՞նչ գոյնի ալ պատկանի: Պր. Քննարեանը, իր տասը տարուան նախագահութեան ընթացքին չպահեց իր այս վիճմտարական մօտեցումը բոլոր անոնց նկատմամբ, որոնք Նոյնիսկ շիլ աքերով նայեցան իր խորամակն ծայրներուն:

Քննարեանական վերջին (բայց ոչ վերջնագոյն) «գոհ»-ը դարձաւ Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ ու լիազօր դեսպան՝ Պէտլ. Վահան Տեր Ղեւոնդեանը, որ «յանկարծական» նամակով մը՝ «ազատ կա-

ցուցուցաւ» (իմա՝ պաշտօնակարգութեան) իր պաշտօնէն, ափ ի բերան ձգելով ողջ լիբանանահայութիւնը, նաեւ տեղական շրջանակները:

Այս ազնիւ, պարկեշտ, ուղղամիտ, լրջախոտ եւ իրատես դիւանագետ-պատմաբանը, իրօք, սիրուած էր եւ յարգուած լիբանանահայ ԲՈԼՈՐ հատուածներէն անխտիր: Լիբանանահայութիւնը միայն ու հպարտ էր որ այս ձեռնհասութեամբ ու հեղինակութեամբ դիւանագետ գործիչ մը ունեցաւ, որուն տակաւին պէտք ունէր:

Մեք համոզուած ենք որ հայրենի դեսպանը, իր անկողմակալ հայեացքներով ոչ մէկ «կաֆ» ըրաւ, Նոյնքան ալ համոզուած ենք, որ ան իր պաշտօնէն հեռացուցաւ, որովհետեւ Երեւան Նըստած պետական այրերուն համար ան կը նկատուէր «անվստահելի» մը:

Բարդոյթէ ու հալածախտէ տառապող այդ այրերը բացառուած չէ որ սոր «գոհեր» ալ գտնեն եւ ամէն բնագաւառէ ներս տեղադրեն իրայիններ ու դրածոներ, որպէսզի անարգել շարունակեն «Աւա՛ղ Հայաստան» կարգախօսը, սակայն միշտ... իրենց ուղղութեամբ:

Յիշեցնելու կարգով ըսենք, թէ դեսպան Վահան Տեր Ղեւոնդեանը, երկրորդ անգամ ըլլալով թիրախ դարձաւ այս դառն եւ անխնայ ճակատագիրին, երբ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի նախագահն էր եւ սփիւռքը անհուն գոհունակութեամբ ընդունած էր այս տեղին նշանակումը, հաւատացած ըլլալով որ ան պիտի կարենայ այդ դժուարին առաքելութիւնը գոլու հանել:

Շատ չանցած, պր. Քննարեան՝ Տեր Ղեւոնդեանը «սահեցուց» այդ պաշտօնէն, որուն համար այլ օրին մամուլով դատապարտեցին այդ մարդն քայլը, մանաւանդ երբ յայտնի դարձաւ, որ այդ պաշտօնին վրայ գետեղուած է պր. Քննարեանի մէկ ուրիշ զինակից-հայրենակիցը՝ Նախիբ Մեքուսեանը:

Ահաւասիկ այս անհանդուրժողութեան եւ անվստահելիութեան մեթոդը-տիպն էր, Սերժ Սարգսեանին նախագահական երդմանաբառի մը վրայ, որ անգամ ինչքան որ սփիւռքը, երբ ժողովուրդը «մեկը չկլլած», միւսը երբեք պիտի չկարենայ «կլլել», եթէ Նոյն տխրահռչակ վարքագիծը շարունակուի:

ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ

ՅԻՇԵՆՔ ԱՆՑԵԱԼԸ, ԱՊՐԻՆՔ ԱՅՍՕՐԸ, ՅՈՒՍԱԳՐՈՒՅՔ ԱՊԱԳԱՅՈՎ

Օրերը, շաբաթները, ամիսները յաշորդաբար կը շուսպեն կատարեալ իրենց լուռ ու խորհրդարարկ անցքը: Եւ մենք կ'անուամք ամէնօրեայ պարտականութիւններով՝ չենք նկատեր ժամանակին փայտուտը: Արդարեւ, ո՞րքան արագ կ'անհետանայ ամէն ինչ, որ յաիտենական չէ:

Տարին, որ անցաւ, կարծես թէ հագիւ սկսած էր: Աս ալ անշուշտ իր նախորդներուն պէս պիտի սուգուի անցեալի խաւարակոտ վիճի մէջ ու պիտի երեսայ ուրիշ տարի մը մեր անցողական կեանքի սահմանափակ հորիզոնին վրայ:

Ի՞նչ կը բերէ մեզի առանձնապէս այս Նոր Տարին, որ կը ժամանէ նորահարս մը գեղանահան շքեղութեամբ: Արդեօք մեր փոխանակած մտղաքանները պիտի իրագործուին՞ յաշորդութեամբ, որ շատ յաճախ յուսահատօրէն կը հերքուին: Ինչպէս լուռ օրերը յայտնի կ'ըլլայ առաւօտէն, այնպէս ալ Նոր Տարին յայտնի կ'ըլլայ ԱՌԱՋԻՆ ՕՐԷՆ:

Մեր ապագան այլամերժօրէն կախում ունի ԱՅՍՕՐԷՆ, թէ ինչպիսի մաքսումներով պիտի իմաստաւորենք ժամանակի իրաքանչիւր վայրկեանը, որ ակնթարթի արագութեամբ կ'անցնի եւ յոյս չկայ, որ կրկին ետ գալ եւ ըլլայ իր արժէքով ՆԵՐՎԱՅ, ինչ որ ցանցնք այսօր, ասիկա պիտի հնձենք վաղը: Հենք կրնար քաղել բան մը, գոր նախապէս չենք սերմանած: Պայքարն ալ հոգեկան դաշտերու վրայ՝ ամէնօրեայ սերմանացանութիւն է: Նուիրեալ ջանքերով կը կոփուին աղանաղեայ նկարագիրները, պողպատէ կամբերը, հրեղէն հոգիները: Այս պայքարը սուրբ է ու կը սղոյի առանց նահանջի եւ առանց յուսահատութեան հետ պայմանաւորուելու: Անով է, որ մահացուօրէն պիտի հարուածենք սուրբ, պիտի բողազերծենք կեղծիքը, պիտի հարթենք դժուարութեանց խութերը ու արմատախիլ պիտի ընենք մեր էութեան մէջ անձ մտղութեանց որոնները: Եթէ կրցանք ժամանակի մէջ բուսելի մը օգտագործումով իմաստ տալ մեր տեսական ձգտումներուն եւ արքիլ վարդուան օրը ԱՅՍՕՐ, ալ յուսահատութիւնը, որքան ալ պիտի պէտ ունի մեր մէջ եւ մեր շուրջը, երբեք պիտի չյաջողի

փշրել մեր կամքը: Սիրոյ բոլոր գորշերը սերմանափոխներ են, որոնք կը սաղմնաորոնին, կը բողբոջին ու կը պողպարեին առաքինութեան արգաւանդ հողերուն վրայ: Աստուծոյ հաւատքով շահաւորուած բարեպաշտը լաւ գիտէ, թէ իր ներկայ կեանքը ազուցած է յաիտենականութեան հետ: Ան՝ անցեալի հարուստ փորձառութենէն կ'առնէ իր խորհուրդները ներկային համար ու առաւել գօտեպնդուած կ'ուղղուի դէպի ապագան, որ իրեն համար այլեւ անապահով ճշանակէտ մը չէ, որ հիասթափուի:

Անոնք որ անհիմաստ յետաձգումներով կը սպասեն իրենց կեանքին թանկագին օրերը եւ ամէն կենսական գործ կը թողնու վարդուան, վրստափօրէն կը կորսնցնեն թէ՛ իրենց այսօրը եւ թէ՛ իրենց ապագան: Ոչ մէկ բան կ'անի ու կը պետդաբերի վաղուան մէջ, եթէ այսօրուան բերրի հողերուն չենք յանձնած սերմերը: Անցեալի մէջ խորհալեայ խուզարկում մը՝ պիտի օգնէ մեզի, որ լիովին ճանչանք մեր ինքնութիւնը իր սխալներով ու սալթաքումներով, որոնք հաւանաբար անելի մեծ կորուստ պատճառած են անմեղներու քան թէ մեր շահերուն: Անցեալը շատ բան կըրճայ ըսել մեզի ու մերք այնպիսի ցնցիչ բաներ, որ իրաւամբ կրնանք մեզի խաչելութեան արժանի համարել:

Անցեալը մեր գերազանց դաստիարակն է եւ ամէնէն իմաստուն ու վստահելի խորհրդատուն:

Աշխարհի վրայ միայն մահկանացու մարդն է, որ պատմութիւն ունի, թէ որպէս անհատ եւ թէ որպէս ազգ: Բիր ափսոս այն մարդուն, որ Ամանորեայ ցնծութիւններուն մէջ բոլորովին կը մոռնայ անցեալին արժէքը եւ շլուզեր օգուտիլ անոր ընծայած հարուստ փորձութիւններէն:

Հենք կրնար որեւէ փաստարկութեամբ ժխտել անցեալը, պարզապէս անոր համար, որ անցեալ է: Պէտք է լրջօրն անդրադառնանք, սերտենք, ուսումնասիրենք ու դատենք զայն: Եթէ դատողութիւնը մոռնալ նկատումներով ակօսուած չէ, ան՝ որոշապէս պիտի ցոյց տայ քեզի, թէ ինչ բան անցեալի մէջ գանձ է ու ինչ բան ժամ: Հօրդ թողած ժառանգութիւնն ալ անցեալէն կու գայ,

բայց երբեք չեն արհամարհներ զայն:

Մարդիկ կան դեկավարութեան դիրքերու վրայ, որ իրենց նալուածքը չեն բաժներ հեռաւոր անցեալէն, միայն անով կը սնանին, անով կը սպասագիծուին եւ անկէ կ'առնեն, ոչ թէ ժողովուրդին համար օգտակարը, այլ ինչ որ կայ հոն անպէտք, սղոյտած ու հանրավնաս: Անոնք պայթիւններով հոգիները փոթորկել եւ խեղաթիրուած իրողութիւններով հրապարակը ժխտել:

Չկայ բան մը անոնց մեծաբերան արտապայտութիւններուն մէջ, որ ներկան լուսաւորէ ոչ ալ բան մը, որ ապագայի մէջ ճանաչէ:

Չեմ ըսեր, թէ մոռնանք ներկան ու ապագան եւ անցեալին վերադառնանք: Աշխարհը այսօր բարբերու բորոտութիւն կը բուրէ եւ կարելի չէ ներկայ կեանքին տուած աղբերով հիմնաւորել ապագան: Անոնք որ ինքնաշարժ կը քշեն՝ իրենց ուշադրութիւնը սեւեռած չեն պահեր միայն առջեւէն սուրացող կառքերուն վրայ: Մերք ընդ մերք կողմնակի հայելիին կը նային, թէ ինչ կայ իրենց ետեւը: Ահաւոր սխալ կը գործենք, եթէ շարունակ առջեւ նայինք ու անտեսենք ետեւէն եկող կառքերը:

Գողերն անգամ, երբ դրամատուն մը պիտի կողոպտեն, ապահով լառաշնաւուր համար, ուշադիր ետեւ կը նային: Հենք կրնար անցեալը բաժնել ներկայէն եւ ոչ ալ ներկան ապագայէն: Աստուծոյ անփոխարինելի պարգեն է ժամանակը իր երեք անխաղաղ բաժանումներով: Աշխատիքն ու պայքարիքն որ ԱՄՐԻԻՆ հոսանքը հեղեղանայ 2008-ի յուլեան եւ իղձերու արեւածագին:

Անհրաժեշտ է, որ այսօր կատարուի ՎԵՐԱԳԱՐԻՄՈՒՄ: Եւ պէտք է հաւատանք, որ մերքին վրայ կատարուած վերադարձը՝ ամօթ ու յետադիմութիւն չէ, այլ յառաջդիմութիւն ու յաղթանակ: Միայն այդ վերադարձի ճամբուն վրայ կրնան հերոսանալ բոլոր հայերը, հատուածական ու դաւանական ինչ ուղղութիւն ալ ունենան: Այդ ճամբան է լուսի ու ճշմարտութեան, որ հայրերուն կ'առաջնորդէ դէպի անբեկանելի միասնականութիւն եւ իր դարաւոր իրաւունքնե-

րուն ու իտելաներուն պակուսիմ: Եթէ մարդիկ նախապէս գիտնային իրենց կեանքի տեսողութեան տարիներուն քանակը, որպէ՛ մը անգամ ի գուր չէին վատներ իրենց ժամանակէն:

Շատ հայ մարդիկ այսօր պատասխանատու դիրքերու վրայ ցաւ կու տան հայրութեան եւ սխալ ուղղութիւն անոր ճակատագրին: Անոնք երեսանկեայ թողուած են անհրաւ շահերու մէջ ու կը գործեն մետաղացած իտելաներով:

Ո՛վ բարի ու բանիմաց ընթերցող, անոնք ժամանակ չունինք քեզ անձ հայերէն թերթ ու գիրք կարդալու: Գուն եւ քու պարզ ու համեստ դիրքովդ՝ հայ ժողովուրդին հարազատ գաւաիք, որ գործատրի լուսնուկ թերթ կը գեն, մտմ կը վառես, անդամատուրք կու տաս, արուեստագէտներ ու մտաւորականներ կը քաջալերես, տօնական օրերը կը յարգես, լեզուդ ու ծագումդ հայադրոշմ կը պահես, հայրենի ժողովուրդիդ տագնապներով կը տուայտիս, հայրենիքդ կը սիրես եւ ազատ ու անկախ Հայաստանին փառք կը գովերգես: Գուն փորձաքիտ եւ քանակով, բայց մեծահարուստ եւ որակով: Երբեք քանակը չէ յաղթած որակին ու պիտի չյաղթէ, ինչպէս մութը հոգիին:

Յաիտենական ճշմարտութիւններ են ատնք եւ հայ ժողովուրդին տիտանեան մաքսումներուն ապառաժեայ արմտիւնները, որ գոյատեւում կու տան իր եղերաբախտ կեանքին: Նոր Տարին քեզի համար է իր ազգային ու բարոյական իմաստով, իր ճշանակալից խորհրդով եւ իր պերճախօս լուսնութեամբ: Մի՛ վախճար ու կապածիր իր անակնկալներէն, որքան ալ վշտալի ըլլան անոնք: Գուն ունիս քեզ գօտեպնդող, քեզ դիցագանգճող եւ մեծ պայքարներու ճամբուն վրայ քեզ փառաւորող ՀԱՅՈՒ ԱՆՊԱՐՏԵԼԻ ՈԳԻՆ:

Նոր Տարին բուկ է: Գուն քեզ ազատ զգայ 365 օրերու լուսնելէ ուղեղութեան ընթացքին եւ հաւատայ, որ յուլեան նոր արեւածագի իր բոլոր բարոյութիւններով պիտի ժպտի քեզի:

ՎԱՐԳԱՆ Ա. ԲԶՆՅ. ՏԻԿԿԵԼԵԱՆ